# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԳԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

---

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Գայ համայնք, ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ,
Հեռ. (0231)60136 , gay.armavir@mta.gov.am

N 285
*28 նոյեմբեր 2018թ.*

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Մաթևոսյան

Ձեզ ենք ներկայացնում Արմավիրի մարզի Գայ համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 19-ի թիվ 14 հերթական նիստի որոշումները:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** Ս. Մարկոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 նոյեմբերի 2018 թվականի N 52

## ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի վեցերորդ մասով,

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հաստատել՝Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 19-ի N 14 հերթական նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԱԳՅԱՆ ՅՈՒՐԻԿ
2. ԹՈՒՄԱՆՅԱՆ ՆԱԽՇՈՒՆ
3. ՀՈՎՍԵՓՅԱՆ ԱԼԻԿ
4. ՄԻՆԱՍՅԱՆ ԱՐԱՄ
5. ՄԻՐԶՈՅԱՆ ԱՐԹՈՒՐ
6. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ
7. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԷԴԳԱՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ՄԱՐԿՈՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

2018 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 19-Ի

N 52 ՈՐՈՇՄԱՆ

ՕՐԱԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

1. ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 19-Ի N 14 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

   (ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ)

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ (ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ)

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՎ ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7-Ի ԹԻՎ 56 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

   (ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ)

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԱՄՐԱԿՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

   (ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ)

5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ

ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ)

6. ՀՈՂԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ)

7. ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ)

8. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ)

9. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Խ. ՔՈՉԱՐՅԱՆ)

10. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ)

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
## ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 53-Ն

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 18-րդ կետով, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ և 14-րդ հոդվածներով, <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով և <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 5-րդ մասով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Սահմանել՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնքի վարչական տարածքում 2019 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. .Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԱԳՅԱՆ ՅՈՒՐԻԿ
2. ԹՈՒՄԱՆՅԱՆ ՆԱԽՇՈՒՆ
3. ՀՈՎՍԵՓՅԱՆ ԱԼԻԿ
4. ՄՈՆԱՍՅԱՆ ԱՐԱՄ
5. ՄԻՐԶՈՅԱՆ ԱՐԹՈՒՐ
6. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ
7. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԷԴԳԱՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

2018 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 19-Ի

N 53-Ն ՈՐՈՇՄԱՆ

## ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ

### I. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնքում սահմանվում են տեղական տուրքի հետևյալ դրույքաչափերը.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ յոթ հազար հինգ հարյուր դրամ,

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար տասնհինգ հազար դրամ,
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ քսանհինգ հազար դրամ հազար դրամ,
- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ քսանհինգ հազար դրամ,
- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ,
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ.

2) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ.

3) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ վաթսուն հազար դրամ.

4) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հինգ հազար դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնմեկ հազար դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնչորս հազար դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնութ հազար դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանյոթ հազար դրամ,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քառասունյոթ հազար դրամ.

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ չորս հազար դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնմեկ հազար դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնչորս հազար դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնութ հազար դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանյոթ հազար դրամ.
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քառասունյոթ հազար դրամ.

5) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ քսան հազար դրամ,

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ երեսուն հազար դրամ,

գ. շահումով խաղերի համար՝ երկու հարյուր վաթսուն հազար դրամ,

դ.վիճակախաղերի համար՝մեկ հարյուր քսան հազար դրամ

6) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ չորս հազար դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ վեց հազար դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնմեկ հազար դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնվեց հազար դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քսանմեկ հազար դրամ,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեսունհինգ հազար դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հարյուր դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հազար հինգ հարյուր դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեք հազար դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հազար դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասը հազար դրամ,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քսան հազար դրամ.

7) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ վեց հարյուր դրամ,

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ մեկ հազար հիսուն դրամ,

գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ,

դ. այլ արտաքին գովազդի համար՝ չորս հարյուր հիսուն դրամ,

8)Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում <<Առևտրի և ծառայությունների մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝յուրաքանչյուր օրվա համար՝երկու հարյուր դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար:

9)Համայնքի վարչական տարածքում մարդատար տաքսու / բացառությամբ երթուղային տաքսիների , միկրոավտոբուսների/ ծառայություն իրականացնելու թույլտվության համար `օրացուցային տարում ` յուրաքանչյուր մեքենայի համար՝ հինգ հազար դրամ:

## II. ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնքում սահմանվում են տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը.

1) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ հինգ հազար դրամ.

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ հինգ հազար դրամ.

3) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ հինգ հազար դրամ.

4) համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճարը <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով կենցաղային աղբի համար ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական 100 դրամ.

5) համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 2000 դրամ.

5ա) առևտրի /այդ թվում շուկաների/, հասարակական սննդի և բնակչության սպասարկում այլ ծառայությունների կենցաղային աղբի հավաքման և փոխադրման համար՝ 1քմ-ի համար՝50 դրամ:

5բ) արտադրական , արդյունաբերական և զբաղմունքային նշանակության շինություններ կենցաղային աղբի հավաքման և փոխադրման համար՝ 1քմ-ի համար՝5 դրամ:

5գ) կրթական, մշակութային և զբաղմունքային նշանակության շինությունների կենցաղային աղբի հավաքման և փոխադրման համար՝ 1քմ-ի համար՝3 դրամ:

6) համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների Գայի «Արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի ծառայություններից օգտվողների համար՝ ՀՈԱԿ հաճախող մեկ աշակերտի ամսական վարձավճարի չափ սահմանել.

ա) դաշնամուրային բաժին՝ 3 500 դրամ:

բ) լարային բաժին՝ անվճար:

գ) ժող. նվագարանների բաժին՝ 3 500 դրամ:

դ) պարարվեստի բաժին՝ 2 000 դրամ:

ե) կերպարվեստի բաժին՝ 1 000 դրամ:

7) սահմանել վարձավճարի զեղչ.

ա) մեկ ընտանիքից մեկից ավելի երեխա հաճախելու դեպքում՝ երկրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի համար 50%.

բ) միակողմանի և երկկողմանի ծնողազուրկ երեխաները ազատվում են վարձավճարից.

գ) Գայի «Արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի միաժամանակ երկու տարբեր բաժիններ հաճախ

երեխայի համար մեկ բաժնի վճարը գանձել 50% չափով.

դ) սոցիալապես անապահով ընտանիքից հաճախող երեխայի համար՝ վարձավճարը գանձել 50%-ի չափով:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. Ծատինյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 նոյեմբերի 2018 թվականի N 54-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՎ ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7-Ի ԹԻՎ 56 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 28-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայի համայնքապետարանի աշխատակազմի և բյուջետային հիմնարկների աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն թիվ 1, թիվ 2, թիվ 3 և թիվ 4 հավելվածների:
2. Սահմանել լրավճար 1974թվականի հունվարի 1-ից հետո ծնված նվազագույն աշխատավարձ ստացող աշխատողների սոց. վճարների գումարների վճարման համար:
3. Ուժը կորցրած ճանաչել Արմավիրի մարզի Գայ համայնքի ավագանու 2017թվականի դեկտեմբերի 7-ի <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայի համայնքապետարանի աշխատակազմի և բյուջետային հիմնարկների աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին >> թիվ 56 որոշումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԱԳՅԱՆ ՅՈՒՐԻԿ
2. ԹՈՒՄԱՆՅԱՆ ՆԱԽՇՈՒՆ
3. ՀՈՎՍԵՓՅԱՆ ԱԼԻԿ

4. ՄԻՆԱՍՅԱՆ ԱՐԱՄ

5. ՄԻՐԶՈՅԱՆ ԱՐԹՈՒՐ

6. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

7. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԷԴԳԱՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԱՐԿՈՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

2018Թ ՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 19-Ի

N 54 ՈՐՈՇՄԱՆ

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 13
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը՝

| 2019թ | | | |
|---|---|---|---|
| h/h | Աշխատակիցների թվաքանակը | Հաստիքա ցուցակը | Պաշտոնային դրույքաչափ |
| 1. | Համայնքի ղեկավար | 1 | 255 000 |
| 2. | Համայնքի ղեկ. տեղակալ | 1 | 142 000 |
| | Համայնքապետարանի աշխատակազմ | | |
| 3. | Աշխատակազմի քարտուղար | 1 | 173 000 |
| 4. | Գլխավոր մասնագետ | 1 | 170 000 |
| 5. | Առաջատար մասնագետ | 1 | 125 000 |
| 6. | 1-ին կարգի մասնագետ | 3 | 86 000 |
| | Տեխնիկական սպասարկման անձնակազմ | | |
| 7. | Գործավարուհի | 1 | 75 000 |
| 8. | Հավաքարար | 1 | 72 752 |
| 9. | Վարորդ | 1 | 84 000 |
| 10. | Սպորտային մարզիչ | 1 | 72 752 |
| 11. | Անասնաբույժ | 0.5 | 37 376 |
| | ընդամենը | 12.5 | 1 464 880 |

ՀԱՎԵԼՎԱԾ 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

2018Թ ՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 19-Ի

N 54 ՈՐՈՇՄԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅԻ «ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ՅՈԱԿ-Ի

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 15
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը՝

| 2019թ. | | | |
|---|---|---|---|
| h/h | Աշխատակիցների թվաքանակը | Հաստիքա ցուցակը | Պաշտոնային դրույքաչափ |
| 1 | Տնօրեն | 1 | 110 000 |
| 2 | Հաշվապահ | 1 | 87 000 |
| 3 | Դասատու | 8.5 | 72 752 |
| | Տեխնիկական սպասարկման անձնակազմ | | |
| 4 | Հավաքարար | 1 | 72 752 |
| 5 | Պահակ | 3 | 80 000 |
| 6 | Դռնապահ | 1 | 72 752 |

Մասնագիտական առարկաներից դրույք սահմանել՝ - 24ժամ

տեսական առարկաներ՝

խմբակային առարկաներ՝ 1 դրույքը 22ժամ:

ՀԱՎԵԼՎԱԾ 3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

2018ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 19-Ի

N 54 ՈՐՈՇՄԱՆ

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ «ՄՇԱԿՈՒՅԹ» ՄԻԱՑՅԱԼ ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Աշխատակիցների թվաքանակը՝ 2
2.Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը՝

| 2019թ. | | | |
|---|---|---|---|
| հ/հ | Աշխատակիցների թվաքանակը | Հաստիքա ցուցակը | Պաշտոնային դրույքաչափ |
| 1 | Տնօրեն | 1 | 77 000 |
| 2 | Գրադարանի վարիչ | 1 | 75 000 |
| | ընդամենը | | 152 000 |

ծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2018 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 19-Ի
N 54 ՈՐՈՇՄԱՆ

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅԻ <<ԳԱՅԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ>> ՀՈԱԿ-Ի

## ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. <<Գայի բժշկական ամբուլատորիա>> ՀՈԱԿ-ի մասնաճյուղերը
1.1 Ակնաշենի բուժմանկաբարձական կետ
1.2 Հայկաշենի բուժմանկաբարձական կետ
1.3 Մեծամորի բուժմանկաբարձական կետ
2. Աշխատակիցների թվաքանակը՝ 21
3. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը՝

| | 2019թ. | | |
|---|---|---|---|
| h/h | Աշխատակիցների թվաքանակը | Հաստիքա ցուցակը | Պաշտոնային դրույքաչափ |
| 1 | Գործադիր տնօրեն | 0 | 1.0 |
| 2 | Հաշվապահ | 1 | 1.0 |
| 3 | Ընտանեկան բժիշկ | 2 | 2.0 |
| 4 | Սանկաբարձուհի | | 1.0 |
| 5 | Ընտանեկան բուժքույր | 2 | 2.0 |
| 6 | Բուժքույր | 1 | 1.0 |
| 7 | ԲՄԿ-բուժքույր | 6 | 6.0 |
| 8 | Լաբորանտ | 1 | 1.0 |
| 9 | Դպրոցի բուժքույր | 1 | 1.0 |
| 10 | Համակարգչային օպերատոր | 2 | 2.0 |
| | Տեխնիկական սպասարկման անձնակազմ | | |
| 11 | Հավաքարար | 1 | 1.0 |
| 12 | Վարորդ | 1 | 1.0 |
| 13 | Պահակ | 2 | 2.0 |
| | Ընդամենը | | 22.0 |

<<Գայի բժշկական ամբուլատորիա>> ՀՈԱԿ-ի տնօրենի աշխատավարձի չափ հաստատել 157000/մեկ հարյուր հիսունյոթ հազար/ ՀՀ դրամ:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 նոյեմբերի 2018թվականի N 56

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 77-րդ հոդվածի 2-րդ կետով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Թույլատրել՝ Արմավիրի մարզի Գայ համայնքի սեփականություն հանդիսացող 8.17հա գյուղատնտեսական նշանակության վարելահողը և 0.2278հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողատարածքները մրցութային կարգով վարձակալությամբ տրամադրելու:

1)Լոտ 1-ԿԾ 04-033-0216-0003, 817հա գյուղատնտեսական նշանակության երրորդ կարգի վարելահողի համար տարեկան վարձավճար սահմանել 150 000/ մեկ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ: Կանխավճարը և քայլի չափը տարեկան վարձավճարի 5%-ի չափով:

2) Լոտ 2- ԿԾ 04-033-0023-0057, 0.2278հա արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողատարածքի համար /կառուցապատման իրավունքով/ տարեկան վարձավճարի չափ սահմանել 43 700 /քառասուներեք հազար յոթ հարյուր/ ՀՀ դրամ: Կանխավճարը և մեկնարկային քայլը տարեկան վարձավճարի

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1.ԱՎԱԳՅԱՆ ՅՈՒՐԻԿ

2.ԹՈՒՄԱՆՅԱՆ ՆԱԽՇՈՒՆ

3.ՀՈՎՍԵՓՅԱՆ ԱԼԻԿ

4.ՄԻՆԱՍՅԱՆ ԱՐԱՄ

5.ՄԻՐԶՈՅԱՆ ԱՐԹՈՒՐ

6.ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

7.ՊԵՏՐՈՍՅԱՆ ԷԴԳԱՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

19 նոյեմբերի 2018 թվականի N 57

## ՀՈՂԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի առաջին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1918 –Ն որոշմամբ և հիմք ընդունելով <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի>> 2018թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 138 եզրակացությունը, քաղաքացի Գոհար Հովհաննիսյանի դիմումը և համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնքի վարչական սահմաններում ընդգրկված, քաղաքացի Գոհար Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող 0.01911 հա վարելահողը/ԿԾ 04-033-0222-0016/ փոխադրել բնակավայրի հողերի կատեգորիայի `բնակելի կառուցապատման հողերի գործառնական նշանակության:

2. Սահմանված կարգով հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում՝ ամենամյա հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություն:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մանում համապատասխան մուծումներ կատարելուց հետո:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1.ԱՎԱԳՅԱՆ ՅՈՒՐԻԿ
2.ԹՈՒՄԱՆՅԱՆ ՆԱԽՇՈՒՆ
3.ՀՈՎՍԵՓՅԱՆ ԱԼԻԿ
4. ՄԻՆԱՍՅԱՆ ԱՐԱՄ
5. ՄԻՐԶՈՅԱՆ ԱՐԹՈՒՐ
6. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ
7. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԷԴԳԱՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
## ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 նոյեմբերի 2018թվականի N 58

### ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 7-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

### ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Արմավիրի մարզի Գայ համայնքում փողոցների խճապատմամբ, Ամանորի առթիվ միջոցառում կազմակերպելու, ամանորյա նվերների ձեռքբերման,հիմնական միջոցների գնահատման,<<Արվեստի դպրոց>>ՀՈԱԿ-ում ջեռուցման համակարգ տեղադրելու, գազաֆիկացման նախագծա-նախահաշվարկային փաստաթղթերի, ջեռուցման նախագծման աշխատանքների, համայնքի կենտրոնական փողոցը լուսավորելու և ամահորի առթիվ համայնքի կենտրոնը զարդարելու նպատակով՝ հատկացնել.

1) Գայ համայնքի Խաչատրյան 1 և Մ. Գորկու փողոցները խճապատելու համար՝ 1000000 /մեկ միլիոն/ ՀՀ դրամ:

2)Ամանորի առթիվ միջոցառում կազմակերպելու համար՝ 800000 /ութ հարյուր հազար/ ՀՀ դրամ:

3) Ամանորյա նվերեների ձեռքբերման համար՝ 500000 /հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ:

4)Գայ համայնքին, Գայ համայնքի <<Արվեստի դպրոց>>-ին և <<Մշակույթ>> միացյալ տնօրինությանը պատկանող հիմնական միջոցների գնահատման համար՝ 350000 /երեք հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ:

5) Գայ համայնքի <<Արվեստի դպրոց>>ՀՈԱԿ-ում ջեռուցման համակարգ տեղադրելու համար՝ 3900000 /երեք միլիոն ինը հարյուր հազար/ ՀՀ դրամ:

6) Գայ համայնքի <<Արվեստի դպրոց>>ՀՈԱԿ-ի գազաֆիկացման նախագծա- նախահաշվարկային փաստաթղթերի համար՝ 150000 / մեկ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ:

7) Ջեռուցման նախագծման աշխատանքների համար՝ 200000 /երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ:

8)Համայնքի լուսավորության ցանցի կառուցման համար՝ 977000 /ինը հարյուր յոթանասունյոթ հազար/ ՀՀ դրամ:

9) Ամանորի առթիվ համայնքի կենտրոնը զարդարելու համար՝ 970000 /ինը հարյուր յոթանասուն հազար/ ՀՀ դրամ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1.ԱՎԱԳՅԱՆ ՅՈՒՐԻԿ

2..ԹՈՒՄԱՆՅԱՆ ՆԱԻՇՈՒՆ

3.ՀՈՎՍԵՓՅԱՆ ԱԼԻԿ

4. ՄԻՆԱՍՅԱՆ ԱՐԱՄ

5. ՄԻՐԶՈՅԱՆ ԱՐԹՈՒՐ

6. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

7. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԷԴԳԱՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ.ՄԱՐԽՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

19 նոյեմբերի 2018 թվականի N 59

## ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 32-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել ՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնքի սեփականություն հանդիսացող 2018 թվականի ամենամյա գույքագրման փաստաթղթերը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԱԳՅԱՆ ՅՈՒՐԻԿ
2. ԹՈՒՄԱՆՅԱՆ ՆԱԽՇՈՒՆ
3. ՀՈՎՍԵՓՅԱՆ ԱԼԻԿ
4. ՄԻՆԱՍՅԱՆ ԱՐԱՄ
5. ՄԻՐԶՈՅԱՆ ԱՐԹՈՒՐ
6. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ
7. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԷԴԳԱՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ՍԱՐԿՈՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ**
**ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 նոյեմբերի 2018թվականի N 60

## ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 9-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ցուցանիշները.

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու համար տալ համաձայնություն Արմավիրի մարզի Գայ համայնքի ղեկավարին՝ Ս. Մարկոսյանին պարգևատրելու դրամական պարգևատրմամբ՝ 255000/երկու հարյուր հիսունհինգ հազար/ ՀՀ դրամ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԱԳՅԱՆ ՅՈՒՐԻԿ
2. ԹՈՒՄԱՆՅԱՆ ՆԱԽՇՈՒՆ
3. ՀՈՎՍԵՓՅԱՆ ԱԼԻԿ
4. ՄԻՆԱՍՅԱՆ ԱՐԱՄ
5. ՄԻՐՉՈՅԱՆ ԱՐԹՈՒՐ
6. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ
7. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԷԴԳԱՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
## ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

### ՈՐՈՇՈՒՄ
19 նոյեմբերի 2018թվականի N 61

### ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 7-րդ կետով և հիմք ընդունելով Գայ համայնքի սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի 2018 թվականի նոյեմբերի 16-ի եզրակացությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Արմավիրի մարզի Գայ համայնքի բյուջեից սոցիալական օգնության գումար հատկացնել Գայ համայնքի երեք ընտանիքների՝

1) Հովակիմյան Նելլի – 50 000 (հիսուն հազար)ՀՀ դրամ

2)Գրիգորյան Լուսիկ-60000(վաթսուն հազար)ՀՀ դրամ

3) Գևորգյան Անատոլյա-50000 (հիսուն հազար) ՀՀ դրամ

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1.ԱՎԱԳՅԱՆ ՅՈՒՐԻԿ

2.ԹՈՒՄԱՆՅԱՆ ՆԱԽՇՈՒՆ

3. ՄԻՆԱՍՅԱՆ ԱՐԱՄ

4. ՄԻՐԶՈՅԱՆ ԱՐԹՈՒՐ

5. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

6. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԷԴԳԱՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՄԱՐԿՈՍՅԱՆ